ԿՈԴ
050.0205Ն. 15.09.17

15 սեպտեմբերի 2017 թվականի թիվ 205-Ն

«ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/18-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով ածանցյալ ֆինանսական գործիքների էության պարզաբանման միջոցով ապահովել ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայի բնականոն զարգացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3.1-ին հոդվածի 2-րդ մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

2017 թ. սեպտեմբերի 26
Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 205-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/18
ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ համարվում է, որ ածանցյալ ֆինանսական գործիքներով պարտավորությունների վերջնահաշվարկն իրականացվում է *դրամական միջոցներով*, եթե ածանցյալ ֆինանսական գործիքի վերջնահաշվարկի օրը այս գործիքներով գործարքի կողմերը պարտավոր են և (կամ) իրավունք ունեն իրենց պարտավորությունները կատարել հաշվանցով և (կամ) զուտացմամբ՝ կողմերի միջև փոխանցելով մի գումար առանց մատակարարելու գործարքի հիմքում ընկած ակտիվները:

2. Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համարվում է, որ ածանցյալ ֆինանսական գործիքներով պարտավորությունների վերջնահաշվարկն իրականացվում է *բնեղենով*, եթե ածանցյալ ֆինանսական գործիքի վերջնահաշվարկի օրը այս գործիքներով գործարքի կողմերը պարտավոր են իրենց պարտավորությունները կատարել գործիքի հիմքում ընկած ակտիվների փոխանցմամբ (առաքմամբ):